ՍԱՀՄԱՆԸ ՈՐՊԵՍ «ՅՈՒՐԱՅԻՆԻ» ԵՎ «ՕՏԱՐԻ» ՏԱՐԲԱԺԱՆՄԱՆ ՈՒ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾՈՆ

ՂԱԶԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Սահմանը մարդկային կեցության իմաստավորման կարևոր ու անհրաժեշտ գործոն է, քանի որ ունի «յուրայինը», «հարազատը», «ապրվածը», այսինքն՝ ներքին տարածությունը որոշարկելու հատկություն: «Յուրայինի» և «օտարի», «ներքինի» և «արտաքինի» միջև սահմանների վերացման (ջնջման) պարագայում մարդը կորցնում է իր որակական որոշակիության և ինքնանույնականացման անհրաժեշտ հիմքերը, ինչը հաստատում է, որ սոցիոմշակութային սահմանի գոյության իմաստավորման խնդիրն ունի տեսական ու գործնական մեծ նշանակություն:

«Յուրայինի» և «օտարի» միջև սահմանները փոխպայմանավորում են միմյանց, և նրանց համագոյակցումը «սահմանային» տարածությունը վերածում է սահմանի վրա կեցության, որպես տարբեր հորիզոնների միաձուլում[1]: Սահմանի այսպիսի իմաստի հետ է կապված երկխոսությունը՝ որպես վերջինիս իրականացման վայր, անցումների, փոխներթափանցումների հնարավորության միջավայր:

Սահմանների սոցիոմշակութային իմաստի և բովանդակության հարցը միշտ էլ եղել է տարբեր գիտակարգերի ուշադրության կենտրոնում: Պետք է նկատել, սակայն, որ հիմնախնդրի տեսական ու գործնական կարևորությունն ընդգծելու տեսակետից սահմանը երկար ժամանակ ընկալվել է որպես ռազմական անվտանգության և պետության ազդեցության գոտու վերջնագիծ: Նման ընկալման դեպքում սահմանը դիտարկվում է որպես քաղաքական գործոն, որպես **գիծ,** որը մատնանշում է քաղաքական իշխանության ազդեցության եզրագոտի: Չժխտելով սահմանի այդ կարևոր գործառույթը՝ նկատենք, սակայն, որ սահմանի բովանդակային ծանրաբեռնվածությունն ավելին է, քան նրա քաղաքական իմաստը և պարունակում է խորհրդանշական բազում իմաստներ:

Ինչպես ամենօրյա կյանքում, այնպես էլ սոցիալական կեցության այլ ոլորտներում տարանջատումն ու սահմանազատումը (փոխադարձ համաձայնությամբ սահմանագծի հաստատումը) գոյություն ունեցող կամ երևակայական այնկողմնային «օտարի» և այսկողմնային «յուրա-

[1] Տե՛ս **Куликова Т. В.** Философия «границы» в контексте гуманитарного познания // "Вестник Нижегородского университета им. Н. И. Лобачевского", 2012, № 1(3), էջ 51:

յինի» միջև ազդեցության ոլորտների ճշգրտման և ամրապնդման կարևոր նախապայման են: Նման գործընթացի հիմքում ընկած է այն կանխավարկածը, որ «օտարը», որպես կանոն, տարբերվող, անհասկանալի, անորոշ, պոտենցիալ վտանգ պարունակող «ուրիշ» է: Ընդ որում, «յուրայինի» և «օտարի» տարանջատում ու հակադրություն կարող է առաջանալ ոչ միայն օբյեկտիվ, այլև գիտակցության մեջ նրանց սուբյեկտիվ արտացոլման պատճառներով[2]: Ի դեպ, «յուրայինների» և «օտարների» ֆիզիկական կամ քաղաքական սահմանները միշտ չէ, որ համապատասխանում են դրանց միջև եղած տնտեսական, էթնոմշակութային ու պատմամշակութային սահմաններին ու դրանց առասպելաբանությանը:

Ելնելով սահմանի տարբեր նշանակություններից՝ կարելի է առանձնացնել աշխարհագրական (բնական և արհեստական), պետական, վարչական, ազգային, էթնիկական, մշակութային, խորհրդանշական և այլ սահմաններ, որոնք կատարում են տարբեր գործառույթներ և լուծում տարբեր խնդիրներ:

Աշխարհագրական սահմաններն այն գծերը կամ գոտիներն են, որոնցով բաժանվում են հարակից աշխարհագրական օբյեկտները, որոնք տարբերվում են միմյանցից որևէ էական նշանով: Այդ տարբերիչ նշանի բովանդակությամբ որոշվում են սահմանները, ինչպիսիք են, օրինակ, գետերը, հովիտները, լեռները, հարթավայրերը, վարչաքաղաքական միավորները, վարչատնտեսական շրջանները և այլն: Աշխարհագրական սահմանները կարող են լինել կտրուկ (ինչպես օրինակ՝ պետական սահմանները) և ոչ կտրուկ՝ որպես անցումային գոտիներ: Տարբաժանված օբյեկտների վրա իրենց ազդեցության աստիճանով աշխարհագրական սահմանները կարող են կատարել հաղորդակցային և խոչընդոտող գործառույթներ: Աշխարհագրական սահմանի հաղորդակցականությունը ժամանակի ընթացքում կարող է ուժեղանալ, օրինակ, ազգային կամ միջազգային տնտեսական տարածություններում միասնականացման գործընթացների ժամանակ: Խոչընդոտող գործառույթները բնական արգելանքներն են, առաջին հերթին՝ ռելիեֆը, որոնք հաճախ անհաղթահարելի են դարձնում այդ սահմանները[3]: Այսպիսով, աշխարհագրական կամ ֆիզիկական սահմանը կարող է բաժանել կամ հակառակը՝ միավորել ցանկացած աշխարհագրական օբյեկտներ, որոնք ինչ-որ բանով տարբերվում են միմյանցից: Աշխարհագրական սահմաններով առանձնացած գոտիների մեջ կարող են մտնել տնտեսական շրջանները, վարչական օբյեկտները, մարզերը, շրջանները, այս կամ այն էթնիկ խմբի բնակության տարածքը և այլն:

---

[2] Տե՛ս **Степанов Ю. С.** Константы: словарь русской культуры. М.: «Академический проект», 2001, էջ 127:

[3] Տե՛ս «Современная иллюстрированная энциклопедия. География». М.: "РОССМЭН", 2006, էջ 154:

Պետական սահմանով տարանջատվում է տվյալ պետության տարածքն այլ պետություններից, որի շրջանակներում որոշվում է պետության ինքնավարությունը: Պետական սահմանի հասկացությունն ի հայտ է եկել պատմական զարգացման ընթացքում, պետության ինստիտուտի ծագմանը զուգահեռ: Պետության սահմանների մեջ էին ընկնում արքայի տիրապետության տակ գտնվող տարածքներն իրենց բնակչությամբ, որոնք տարատեսակ հարկեր էին վճարում նրան՝ ապահովելով նաև պաշտպանությունը: Ընդ որում, այդ սահմանները հաճախակի փոփոխվում էին արշավանքների ու պատերազմների հետևանքով, և այդ իսկ պատճառով ֆեոդալական պետական սահմանը, ի տարբերություն ժամանակակից պատկերացումների, անորոշ ու անկայուն էր: Իսկ ժամանակակից աշխարհում պետական սահմանները հստակ են և ամրագրվում են միջազգային տարբեր համաձայնագրերով ու պայմանավորվածություններով: Պետական սահմանների առանձնահատկություններից մեկն այն է, որ միևնույն պետության այդ սահմաններն իրենց տարբեր մասերում ոչ նույնական, երբեմն նույնիսկ հակադիր բնութագրիչներ ունեն: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության հետ Վրաստանի սահմանագիծը որոշ հատվածներում հստակ գծանշված չէ և նույնիսկ ինչ-որ իմաստով թափանցելի է. սահմանակից համայնքների բնակիչների միջև կա որոշակի փոխհարաբերություն, երկխոսություն, գործարք և այլն, Թուրքիայի հետ սահմանագիծը հստակ է և «շատ հոծ», իսկ Ադրբեջանի հետ սահմաններն «արյունոտ» են ու վեճի առարկա:

Առանձնացվում են նաև վարչական սահմանները, որոնք անցկացվում են տվյալ պետության իշխանությունների կողմից՝ կատարելով կառուցվածքային, կազմակերպչական ու բաժանիչ գործառույթներ, և որոնց շնորհիվ ձևավորվում են տարածաշրջանները, մարզերը, համայնքները և այլն:

Ինչպես տարածաշրջանային, այնպես էլ արտաքին գործոնների («օտարների») առկայությունը նպաստում է տարածաշրջանային «յուրայինների» ինքնանույնականացմանը, իսկ՝ «օտարների» հետ սահմանի առկայությունը՝ տարածաշրջանային ինքնության հզորացմանը: Ինչ-որ իմաստով կարելի է ասել, որ արտաքին սահմանները անջատողականությանը նպաստող նշանակալի գործոն են[4]: Այլ կերպ ասած՝ արտաքին «օտարների» հետ հակադրելու ու համեմատելու միջոցով «յուրայինների» որոշարկումը հանգեցնում է նրանց առանձնացմանը նաև ներքին «օտարներից»: Տարածաշրջանային «յուրայինների» համար կարող են լինել մի քանի ռեֆերենտ խմբեր, որոնց մի քանի տարբերակների առկայությունը պայմանավորված է դրա «ենթաինքնություն» լինելով: Այս առանձնահատկությունն ազդում է տարածաշրջա-

[4] Տե՛ս **Дробижева Л.** Возможность либерального этнонационализма // "Реальность этнических мифов". М.: «Гендальф», 2000, էջ 91:

նային «յուրայինների» և «օտարների» միջև բարձր մակարդակի տարասեռության (հետերոգենության) վրա: Տարածաշրջանային «յուրայիններին» հակադրվում են ոչ միայն տեղայնացման չափանիշով «օտարները», այլև այդ տեղայնացման համար արտաքին «օտարները»: Օրինակ՝ «օտար» կարող է համարվել տարածաշրջանի վարչական կենտրոնը՝ կենտրոնական իշխանությունը (ինչպես Մոսկվան ԽՍՀՄ-ում): Թեև պետք է նկատել, որ կենտրոնը հանդես է գալիս որպես քաղաքակրթական չափորոշիչ[5]:

Այս առումով տարածաշրջանային «յուրային-օտար» սահմանազատումն իրականացվում է ոչ միայն արտաքին «օտարների», այլև ներքին «օտարների» հետ համեմատության միջոցով, ինչը նպաստում է տարածաշրջանային ինքնության տարասեռացմանը (հետերոգենացմանը): Եվ հակառակը՝ մեգահանրույթի մեջ ընդգրկվելը կարող է նպաստել «յուրայինների» և «օտարների» միասեռացմանը (հոմոգենացմանը), որի դեպքում «յուրային-օտար» տարբաժանման բոլոր ներքին սահմանները վերացվում են, և մնում է միայն արտաքին սահմանը, որը նպաստում է մեգահանրույթի հետ նույնականացմանը (օրինակ՝ արտաքին վտանգի դեմ պայքարելու համար բոլոր շրջանների ու տարածքների համախմբումը):

Սահմանները կարող են փոփոխվել, աշխարհի քարտեզի վրա «վերագծվել», դառնալ ավելի հոծ, անթափանցելի, փակ կամ հակառակը՝ ավելի թափանցիկ, բաց:

Աշխարհագրական, պետական և վարչական սահմանները ֆիզիկական բնույթի են: Դրանց կողքին գոյություն ունեն նաև խորհրդանշական ու մշակութային սահմանները, որոնց բնույթով պայմանավորվում են միջխմբային, միջէթնիկական, միջմշակութային փոխհարաբերություններն ու երկխոսությունները, յուրայինի ու օտարի տարբաժանման առանձնահատկությունները:

Սահմանները հանրույթների, նրանց ինքնությունների ձևավորման առանցքային գործոն են. սահմանի անցկացումն ու ձևավորումը, դրա անցման կանոնները, դրա մասին պատկերացումներն արտացոլում են հանրույթների ներքին բնութագրիչները, որոնք «շրջանակվում» են սահմաններով: Չինական պատը կամ «երկաթյա վարագույրները»՝ որպես նյութական և մետաֆորիկ պատնեշներ, իրենց դարաշրջանի և իրենց մշակույթի ծնունդ են[6]: Սա նշանակում է, որ սահմանի ընկալումը, նրա նկատմամբ վերաբերմունքը, այնկողմնայինի և այսկողմայինի, յուրայինի և օտարի տարբաժանումը տվյալ հանրույթում կամ երկրում

---

[5] Տե՛ս **Енина Л. В.** Оппозиция «провинция–столица» в журналистском тексте // "Философские и лингвокультурологические проблемы толерантности". М.: «ОЛМА-Пресс», 2005, էջ 222-223:

[6] Տե՛ս **Бредникова О.** Последний рубеж? // "Отечественные записки", 2002, 6(7), էջ 280:

ձևավորվում են արհեստականորեն՝ միաժամանակ կրելով արտաքին գործոնների ազդեցությունները, ինչպիսիք են, օրինակ, օտարների ագրեսիվ կամ բարեկամական վերաբերմունքը յուրայինների նկատմամբ և այլն:

Ընդհանրապես մարդկային կենսագործունեության հիմքում ընկած են մի շարք արժեքաբանական տարբերակիչ գնահատականներ (վտանգավոր և անվտանգ, օգտակար և վնասակար, յուրային և օտար և այլն), որոնք միջմշակութային փոխհարաբերություններում դրսևորվում են վերաբերմունք արտահայտող կարծրատիպերի ու կանխադիրքորոշումների տեսքով՝ էական ազդեցություն թողնելով միջմշակութային փոխհարաբերությունների վրա[7]: Բանն այն է, որ մարդու հիմնական հատկություններից մեկը շրջակա աշխարհի առարկաների ու երևույթների տարբերակումը, դասակարգումն ու սահմանազատումն է: Այս առնչությամբ Յու. Լոտմանը նկատում է, որ «…անհատականության ինքնանույնականացման և արժեհամակարգի ձևավորման հիմնական մեխանիզմներից մեկը սահմանազատումն է, սեփական և օտար տարածքների միջև սահմանի անցկացումը…: Սեփական տարածությունը սահմանվում է որպես «մեր», «յուրային», «մշակութային», «անվտանգ», «ներդաշնակ կազմակերպված» և այլն: Դրան հակադրվում է այն տարածությունը, որը բնորոշվում է որպես «նրանց տարածություն», «օտար», «թշնամի», «քաոսային», «ուրիշ»»[8]:

«Ուրիշին» հասկանալը հեշտ չէ, առավել ևս՝ երբ կողմերի միջև գոյություն ունեն լեզվական և ուստի նշանաբանական տարբերություններ: Մարդը հասկանում է միայն այն, ինչն արդեն որոշակիորեն ճանաչել է: Նորի ճանաչումը հաճախ զուգորդվում է վախով, քանի որ այդ նորը դեռևս անորոշ է և կարող է ընկալվել որպես սեփական գոյության սպառնալիք: Ճանաչված, մասնաբաժանված և նշանակված աշխարհն առօրյա դիսկուրսում վերարտադրվում է որպես յուրային, անվտանգ, հարմարավետ, ոչ ագրեսիվ: Սեփական և օտար մշակույթների ճանաչված կարծրատիպերը նպաստում են հարմարավետության և անվտանգության զգացողության ստեղծմանը: Այդ զգացողությունը, որն անհատը ստեղծում և ձգտում է ամրապնդել, ինքնապաշտպանական այն բնազդներից մեկն է, որը նպաստում է մարդու ինքնության պահպանմանը:

Բացի այդ՝ մարդու կողմից շրջակա միջավայրի մասին տեղեկույթի ընկալումն ունի ընտրովի բնույթ: Յուրաքանչյուր մարդու մշակութային և կենսական փորձը, հույզերը, դաստիարակությունն ու կրթությունն անհատական ու անկրկնելի են, և այդ պատճառով մարդիկ մին-

---

[7] Տե՛ս **Карасик В. И.** Языковой круг; личность, концепты, дискурс. Волгоград: «Перемена», 2002, էջ 29-30:

[8] **Лотман Ю. М.** Внутри мыслящих миров. Человек–текст–семиосфера–история. М.: «Языки русской культуры», 1996, с. 175.

նույն իրադարձություններին հաճախ տալիս են տարբեր մեկնաբանություններ: Բանն այն է, որ շրջակա աշխարհից ստացած տեղեկությունները մարդիկ համակարգում ու դասակարգում են ըստ իրենց նախապատվությունների ու աշխարհընկալման, քանի որ նրանք չեն կարող ապրել անկարգ ու օտար աշխարհում[9]: Այսինքն՝ ընկալված իրերը, մարդիկ, հարաբերություններն ու երևույթները դասակարգվում են համապատասխան խմբերի, դասերի, տեսակների, որպեսզի աշխարհը ձեռք բերի կարգավորվածություն և հարազատ դասավորվածություն:

Հարկ է նշել, որ շրջակա աշխարհի ընկալման ու յուրացման ընթացքում մարդը ղեկավարվում է գեղեցկության, ճշմարտության, ընկերության, ազատության, արդարության և այլնի մասին սեփական պատկերացումներով, ինչն իր հերթին պայմանավորված է նախորդ կենսափորձով, անձնական հետաքրքրություններով, դաստիարակությամբ, սոցիալ-տնտեսական և այլ գործոններով: Այս գործոնների ազդեցությամբ շրջակա աշխարհը բացվում է մարդու առջև ամենատարբեր նշանակություններով՝ ամենանպաստավորից մինչև նրա կյանքին սպառնացողը:

Շրջակա աշխարհը մարդու գիտակցության մեջ արտացոլվում է մշակութային «հայելու» միջոցով: Այլ կերպ ասած՝ աշխարհի ընկալումը ոչ թե կրավորական հայեցողություն է, այլ մարդու բարոյական հայացքների, մշակութային ավանդույթների, նախապաշարումների ու կարծրատիպերի «զտիչով» անցած և անձնավորված ըմբռնում, ինչը հնարավորություն է տալիս «մարդկայնացնելու» իրականությունը՝ այն դարձնելով առավել հասկանալի ու բացատրելի: Իսկ դա նշանակում է, որ մեր արարքների առնվազն առերևույթ պատճառները երբեմն պայմանավորված են աշխարհի մեր սուբյեկտիվ ընկալմամբ՝ անկախ նրա իրական գոյից: Ուստի սահմանից այն կողմի աշխարհի չճանաչվածությունը դառնում է իրականության և երբեմն տրամաբանության հետ ընդհանրություն չունեցող նախապաշարումների, կարծրատիպերի, աբսուրդ դատողությունների առաջացման պատճառ: Այդպիսի պատկերացումները կուտակվելով ձևավորում են ժողովուրդների միջև մենթալ, երևակայական սահման, որը գոյություն ունի ժողովրդի կամ ազգի ներկայացուցիչների մեծամասնության գիտակցությունում:

Սահմանի այն կողմում գտնվող օտարների մասին որոշակի պատկերացումների նկատմամբ կայուն (կույր) հավատն ու կարծրատիպերը կարող են ձևավորվել ներսից՝ քարոզչության, գաղափարախոսության, զանգվածային լրատվամիջոցների և քաղաքական մեխանիզմների ազդեցությամբ: Ավելին, այդ այսպես կոչված հարմարավետ պրակտիկան կիրառվում է անգամ մանիպուլյացիոն գործընթացներում, քանի որ այն հենվում է ավանդույթների, նախապաշարումների,

[9] Տե՛ս **Вальденфельс Б.** Повседневность как плавильный тигль рациональности // "Социологос: Социология, антропология, метафизика". М., 1991, вып. 1, էջ 42:

առասպելների և այլնի վրա, որոնք հենց հարմարավետ պրակտիկայի դրսևորումներ են[10]: Այսպես, ԽՍՀՄ պետական սահմանը չափազանց կարևոր դերակատարություն ուներ խորհրդային հասարակության կառուցարկման գործում: Այն ոչ միայն որոշում էր յուրայինների տարածքը՝ առանձնացնելով օտարներից, այլև կատարում էր համընդգրկուն գործառույթ, բովանդակում էր իմաստների մի ողջ համակարգ՝ քաղաքականից մինչև մետաֆիզիկական: Այն մի չափանիշ էր, որով կողմնորոշվում էր կյանքի կազմակերպումը: Կարելի է ասել, որ ԽՍՀՄ-ում սահմանի մետաֆորը (փոխաբերություն, այլաբերություն) համընդհանուր նշանակություն ուներ: ԽՍՀՄ սահմանները ոչ միայն և ոչ այնքան տարանջատում էին ԽՍՀՄ-ի տարածքն իր սահմանակից երկրներից, որքան առանձնացնում էին նրան ողջ կապիտալիստական աշխարհից, մասնավորապես արևմուտքից՝ քաղաքական, տնտեսական, գաղափարական, մշակութային և այլ տեսանկյուններից՝ ձևավորելով ԽՍՀՄ հասարակության սոցիոմշակութային մի յուրահատուկ ինքնություն: Այդ հասարակությունը թե՛ ներսից, թե՛ դրսից կամ «յուրայինների» և «օտարների» կողմից մարկերավորվում և դիցաբանականացվում էր՝ երկուստեք յուրային-օտար փոխհարաբերությանը տալով բարեկամ-թշնամի անտագոնիստական կաղապարը:

ԽՍՀՄ փլուզումից հետո տպավորություն ստեղծվեց, թե այդ «երկաթյա վարագույրի» սահմանի վերացումից հետո երկու տարբեր ճամբարների միջև կձևավորվեն ավելի մեղմ՝ «քաղաքակիրթ» սահմաններ, և կսկսվեն երկխոսություններն ու ինտեգրացման գործընթացները: Սակայն ԽՍՀՄ փլուզումից հետո «արյունոտ» սահմաններ ձևավորվեցին նախկին սոցիալիստական բազմաթիվ հանրապետությունների միջև, իսկ Արևմուտքի վերաբերմունքն առանձնապես չփոխվեց: Ավելին, այսօր տեղի ունեցող միջազգային քաղաքական գործընթացները վկայում են, որ Արևմուտքն ու Ռուսաստանը ոչ միայն չեն կարող խաղաղ համագոյակցել, կառուցել թափանցիկ սահմաններ, այլև նրանց կեցության անհրաժեշտ պայման է միմյանց թշնամի հռչակելը:

Բանն այն է, որ սահմանի գաղափարը մեծապես ու գլխավորապես զուգորդվում է «փշալարային», մեղմ ասած՝ «պատից այն կողմ», «ուրիշ», «սխալ», «արգելված» և այլ կարծրատիպերի հետ: Եվ այնուամենայնիվ, թեև սահմանազատման պատնեշներն անցողիկ են, միևնույնն է, դրանք երկար ժամանակ պահպանում են իրենց վարքաբանական նշանակությունը. դրանք են ստեղծում այն աշխարհը, որտեղ ապրում են մարդ անհատը և էթնիկ խումբը: Այդպիսի օրինակ կարող է ծառայել նաև միջգերմանական սահմանը: «Բեռլինյան պատի» ֆիզիկական ռեալությունը կարճ կյանք ունեցավ: Պետք է նկատել, սակայն, որ երկու

[10] Տե՛ս **Филинский А. А.** Критический анализ политического дискурса предвыборных компаний. Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук. Тверь, Тверской гос. университет, 2002, էջ 59:

Գերմանիաների միջև ֆիզիկական սահմանի ոչնչացումից հետո դեռևս պահպանվում է դրանց միջև վարքաբանական սահմանը. փոխվել է միայն դրա արժեքաբանական իմաստը: Եթե մինչ այդ ԳԴՀ-ն դիտվում էր չար ուժերի պատվար, ապա այժմ նախկին այդ տարածքը՝ իր բնակիչներով հանդերձ, ստացել է «մութ Գերմանիա» (Dunkeldeutschland) որակումը[11]: Այսպիսի օրինակներ շատ կան, որոնք մեկ անգամ ևս հաստատում են, որ բնության մեջ սահմաններ չկան. սահմաններն անցկացնում է մարդը, դրանք նշանային, մշակութային, գաղափարական բնույթ ունեն և իրենց հատուկ կարծրատիպային վարքով մարդկանց գոյության համար խիստ էական են: Ինչպես գոյություն ունի ներքին գրաքննություն, այնպես էլ կան ներքին սահմաններ, որոնք միջմշակութային փոխհարաբերություններում կողմերի փոխհասկացման ու փոխըմբռնման արգելքներ են:

Սահմանը կյանքի ցանկացած ձևի գոյության, ինչպես նաև այդ ձևի ինքնության պահպանման անհրաժեշտ պայման է: Ներփակվել որոշակի սահմանի մեջ նշանակում է գոյության սեփական աշխարհը պաշտպանել քաոսից, արտաքին վտանգներից: Մարդկային այդ կարևոր գործառույթը վերապահված է մշակույթին: Ստեղծելով իմաստավոր կեցության ներքին կազմակերպման իր տեսակը՝ մշակույթը, պատկերավոր ասած, իրեն զրկում է ներքին տարածքից և ամբողջապես հաստատվում է սահմանի վրա[12]: Մ. Բախտինը մշակույթի «լրջությունն» ու «նշանակալիությունը» կապում է նրա՝ սահմաններում գոյության հետ. «Մշակույթը չպետք է պատկերացնել որպես մի ինչ-որ տարածական ամբողջություն, որն ունի սահմաններ ու ներքին տարածություն: Մշակույթը ներքին տարածություն չունի. այն գոյություն ունի, գտնվում է սահմաններում, ամենուրեք, նրա յուրաքանչյուր «հատվածով» անցնում են սահմաններ:… Յուրաքանչյուր մշակութային գործողություն էականորեն ապրում է սահմանների վրա. սա է նրա լրջությունն ու նշանակալիությունը, շեղվելով սահմաններից՝ այն կորցնում է իր հիմքերը, դառնում է դատարկ, ամբարտավան, ծնվում և մահանում է»[13]:

Ավելին, մշակույթը սահմանային ֆենոմեն է և որպես այդպիսին ունի երկակիություն, պարունակում է բաժանող և միավորող որակներ: Այն կա՛մ շփման գիծ է, կա՛մ հակառակը՝ անջատման, առանձնացման «պատ»: Որպես մշակույթների առավել արդյունավետ շփման գոտի՝ այն նպաստում է ստեղծագործական գործունեությանը, որտեղ մշակույթները ոչ միայն փորձի փոխանակություն են կատարում, այլև

---

[11] Տե՛ս **Кашкин В. Б.** Маркеры своего и чужого в межкультурном диалоге // "Взаимопонимание в диалоге культур: условия успешности". Воронеж, 2004, ч. 2, էջ 49-50:

[12] Տե՛ս **Է. Հարությունյան,** Մարդկային կեցության այլակերպումները, Եր., 2018, էջ 12-13:

[13] **Бахтин М. М.** Собр. соч. Т. 1. М.: "Русские словари. Языки славянской культуры", 2003, с. 282.

նպաստում են երկխոսությանը երբեմն հարստացնելով միմյանց, իսկ երբեմն էլ ձգտելով պահպանել սեփական առանձնահատկությունները: Հակադրվելով «ուրիշին»՝ մշակույթը ինքն իրեն հստակեցնում և պարզեցնում է, առաջ է քաշում մշակութային դոգմաներ իր անհատականության խորհրդանիշերով ու նշաններով, կաղապարվում և քարանում է «ազգային բնավորության», «ազգային գաղափարների», «ազգային հատուկ դերի ու նախասահմանվածության» և այլ առասպելներում, ինչը կարող է նաև աղքատացնել մշակույթը: Այս պարագայում մշակույթի կորուստները կարող են մեծ լինել, քանի որ այս ամենը իրականությանը չհամապատասխանող բարձր ինքնագնահատականի, «ուրիշների» հետ հարաբերություններում ագրեսիվության ու անհանդուրժողականության զարգացման պատճառ կարող է դառնալ, ինչը վերջին հաշվով ուղղվում է իր դեմ:

Մշակույթների սահմաններում ձևավորվում և դաստիարակվում է մարդկանց ինքնագիտակցությունը: Եթե սահմանը պահպանվում է որպես շփման գոտի, այն դառնում է նաև ստեղծագործելու, մշակույթ ձևավորելու ու զարգացնելու գոտի: Եթե սահմանը տարանջատման գոտի է, այն «պահածոյացնում» է մշակույթը, մեռցնում է, տալիս է նրան քարացած ու պարզունակ ձև: Քարացած, քանի որ մշակույթում պահպանվելու ձգտումն աճում է զարգանալու ձգտման հաշվին: Իսկ պարզեցված, քանի որ այդ ձևը թույլ է տալիս ավելի հեշտ պաշտպանվել:

Մշակութային սահմանների՝ որպես շփման ու տարանջատման գոտիների երկակիության դեպքում որևէ կողմի գերակայությունը կարող է հանգեցնել մշակույթների անկման կամ վախճանի: Առաջինի դեպքում դրանց սպառնում է ձուլում, երկրորդի դեպքում՝ մեկուսացվածություն և մահ:

Սահմանի ֆենոմենն իր արմատներով հասնում է կյանքի ամենախորքերը, ինչը շատ դժվար է հայեցակարգայնացնել և, հենց դրանով մեծ է սահմանի ֆենոմենի՝ որպես իրավիճակը սկզբունքորեն հասկանալու ճանապարհի ճանաչողական նշանակությունը: Այս առումով սահմանի փիլիսոփայական իմաստավորումը նպաստում է հասկացմանը վերաբերող խնդիրների եթե ոչ հաղթահարմանը, ապա գոնե վերհանմանը: Այսինքն՝ սահմանի փիլիսոփայությունը կարող է մեկնաբանվել որպես հասկացման փիլիսոփայություն, քանի որ սահմանի ֆենոմենն ի հայտ է գալիս տարբեր՝ կենսական, սոցիալական, քաղաքական, մշակութային իրողությունների խաչմերուկներում ու հատման կետերում: Սահմանն այն «վայրն» է, որտեղ տեղի են ունենում փոխազդեցություններ, հարաբերություններ, անցումներ, փոխներթափանցումներ, որտեղ «յուրայինի» իմաստը բացահայտվում է «օտարով»:

Բանալի բառեր – *սահման, «յուրային», «օտար», ինքնություն, միջմշակութային փոխհարաբերություն, սահմանազատում, կարծրատիպ, հասկացում*

КАЗАР АВЕТИСЯН – ***Граница как фактор разделения и познания “своих” и “чужих”.*** – В статье исследуется граница как феномен демаркации “своих” и “чужих”. Выделяются географические, государственные, административные, национальные, символические и культурные границы. Особое значение придаётся пограничью культур с его двойственным характером. С одной стороны, это зона общения и диалога культур, с другой – зона их разъединений и столкновений. Преобладание чего-либо одного может привести к закату культуры и в итоге к её падению. Именно поэтому значение границы осмысляется в контексте философии понимания, способствующей межкультурному диалогу и взаимообмену.

Ключевые слова: *граница, свой, чужой, идентичность, межкультурные взаимоотношения, разграничение, стереотип, понимание*

GHAZAR AVETISYAN – ***Boundary as a Factor of Division and Self-Knowledge "Insiders" and "Strangers".*** – The article explores the boundary, as a phenomenon of demarcation of "insiders" and "strangers". Geographic, state, administrative, national, symbolic and cultural borders are divided. Particular importance is attached to the boundaries of culture, which are of a dual nature. On the one hand, this is a zone of communication and dialogues of cultures, on the other, a zone of disconnections and clashes. The prevalence of each of these parties can lead to a decline in culture and, eventually, to the decline. Therefore, the philosophical interpretation of the border is viewed as a philosophy of understanding that will promote intercultural understanding, dialogue, and interchange of cultural elements.

Key words: *boundary, insider, stranger, identity, intercultural relationship, demarcation, stereotype, understanding*

Ներկայացվել է՝ 16.11.2018, գրախոսվել է՝ 14.01.2019, ընդունվել է տպագրության՝ 27.02.2019